

Մայր Աթոռ վերագարճաւ տէր կոմիտաս վարդապետը, որը գնացել էր Թիֆլիզ բժշկուելու համար:

Միաբանական մամնաւոր խորհրդակցութեան ժամանակ ընտրուեց մի մամնաժողով տ. տ. Եղիշէ, Մխիթար, Կարապետ, Երուանդ վարդապետներից, միաբան Դալուստ Տէր Մկրտչեանից և ալ. Միրական Տիգրանեանից՝ պատրաստելու միաբանութեան, վանուցա և կալուածոց կառավարութեան համար ներքին կանոնադրութիւն և միաբանութեան հաւանութիւնից յետոյ մատուցանելու նորին Սրբութեան ի հաստատութիւն:

ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՒ ՀԱՅԵՐԱԿԱՎԵՆ ԿԵԸՆՔԻՑ

«Русское Слово» թէրթի 254 համարում հայր Գ. Ս. Պետրովը «Հովուութիւն և տէրտէրութիւն» վերնագրով յօդուածում իւր զայրոյթն է յայտնում վերջերս տեղի ունեցած թեմական ժողովների գանագան զբաղմունքների մասին։ Մինչդեռ ժամանակակից շարժումը ընկերվարական և ընդհանուր գաղափարների շուրջը հոգեսրականների առաջ դրել է պատմական նշանակութիւն ունեցող հարցեր, համաժողովները հին ձեռվ զբաղւում են ընտանեկան մանր գործերով։ մի ժողովում տաք տաք վիճում են, թէ ո՞ր ֆիրմայից գնեն խաղողի գինին, մի ուրեշ տեղ քննում են մոմի գործարան փակելու կամ չը փակելու ինդիքը, մի տեղ վիճում են թեմական դպրանոցի հանրակացարանն ընդարձակելու մասին և այլն։ Մտացւում է այն տպաւորութիւնը, որ քահանայը հաւաքուել են իրենց ընտանեկան «տէրտէրական» խնդիրների մասին զրուցելու, իսկ Աստուածային, Եկեղեցական, հովուական գործերի մասին չեն էլ մտածում։ Արդեօք գա այն չեն նշանակում, որ հովիւները շարունակում են դատապարտելի կերպով քնած մնալ, եթե հօտն արդէն արթնացել է։ Հայր Պետրովի կարծեքով այդպիսի եզրակացութիւնը սխալ կլիներ, իրականապէս ամբողջ հոգեսրակա-

նութիւնը քնած չէ. Նրա շահերը նոյնքան ընդարձակ են, որքան և հասարակութեան շահերը և այդ համաժողովներն երբէք չեն արտացոլացնում ուուս հովիւների տրամադրութիւնը։ Որպէս օրինակ հայր Պետրովը առաջ է բերում հետեւեալ փաստը։ — Սմոլէնսկում համաժողովից շատ առաջ պատրաստուած էր զեկուցագիր եկեղեցական տմենաէական խնդիրների մասին, բայց նա յայտնի պատճառներով չը զեկուցուեց և լոյս աշխարհ չեկաւ։ Նման գէպերն ապացոյց են, «որ հովուութիւնը կուում է տէրտէրութեան գէմ և որ բարոյական ոյժը հովուութեան կողմն է, թէև նա զեռ իւր առաջին խոռքերն է արտասանում»։

— Թէև նախանձելի բան չէ գինու և մոմի ձուլարանի խնդիրների նման հարցերի քննադատութիւնը, բայց ուուս քահանայք գոնէ հնարաւորութիւն ունեն հաւաքուելու, իրար երես աեսնելու և մտքերի փոխանակութիւն ունենալու։ Մեր խեղճ քահանայք՝ նախ երկար հալածանքի և ապա մեր սիրուն երկրում քռնկած մարդակեր հրդեհի և գազանային ինստինքուների բորբոքման շնորհիւ այնպէս են շփոթուել և ընկճուել, որ նոյն իսկ չը գիտեն, թէ ի՞նչ է թեմական ժողով ասուածը, մտքերի փոխանակութիւնը, եկեղեցու կարիքներն և այլն։ Մինչդեռ աշխարհական տարրերը մի քանի անկիւններից հաւաքուած՝ իբրև աղգային ժողով են նիստեր գումարում ու գործում, մեր քահանաները մնացել են անշարժ և անտարբեր։ Արդեօք մեր անշարժութիւնը մի միայն արտաքին հանդամանքների արդիւնքն է, թէ թեմական և վիճակային եշխանութիւնների անշարժութեան և քահանայից անտարբերութեան հետեւանք։ Այժմս աւելի քան երբ և իցէ հարկաւոր են ժողովներ։ Այժմս առաւել քան երբ և իցէ մեծ է հայ ժողովքի և եկեղեցու կարիքը։ Ժամանակ է սարսափահար դրութիւնից դուրս գտնու և կեանքի նշոյլներ՝ հետաքրքրութիւն, ապօելու և գործելու տրամադրութիւն ցոյց տալու։

Սարատովի հոչակաւոր Գերմոգէն եպիսկոպոսի թեմական թերթում կարգում ենք։

Համալսարանական բարենորոգութիւնը զբգել է մեր երկու ներմարանների խորհուրդներին, որոնք և վճռել են գիմել, որ աշխարհական բարձր դպրոցների նման ճեմարանական կանոնադրութիւնն էլ փոխուի, վերատեսուչներն և տեսուչներն ընտրուին խորհրդի կողմից և ճեմարանի ծրագիրն էլ բաժանուի

մի քանի մտսերի: Հոգեար գպրանոցական հաստատութիւնները կարեք ունին եկեղեցական արմատական բարեփոխութեան և ոչ թէ այդ կապկային փոխանակութեան: Չենք ուզում հաւատալ, որ ճեմարանների խորհուրդները ցանկացած լինէին նմանուիլ կուտափառաշներին Տ. որոնք ցանկացան բնական օրէնքներով կառավարուել, ցանկացան իրենք իրենց օրէնք դառնալ փոխանակ ներքին մարդով Աստուծոյ օրինաց մէջ գոհունակութիւն դանելու: Իրենց անդամների մէջ այլ օրէնքը տեսան, մտքի օրէնքին գիմագրող: Թէւ անխուսափելի է ճեմարանների խորհուրդների անդամների մէջ ժագած մեղքի օրէնքը, բայց չէնք ցանկանալ նրանց այդ օրէնքի գերիներ տեսնել: Աստուծոյ օրէնքով թող մեռնեն ճեմարանների խորհուրդները օրէնքի համար, որպէս զի ամրողազին ապրեն Աստուծոյ և Նորա Աեկեղեցու համար: (Գաղ. Բ. 19.)

— Եատ ընսրոշ է, այնպէս չէ. ահա ձեզ և Աստուծոյ անսունն ու նրա օրէնքներ շահագործելու միամիտ և տիսուր ապացոյցը և այդ Պողոս առաքեալի թղթերից վերցրած կտորներով համեմած՝ ճիշտ այնպէս, ինչպէս ստրուկների ազատութիւնից առաջ 1859 թուականին Մոսկուայի մետրոպօլիտ Ֆիլարետը պնդում էր Աստուածաշնչից վերցրած վկաչաբանութիւններով, որ ճորտութիւնը Աստուածազիր օրէնք է, սուրբ գրքով մեզ հաղորդած: Որպէս դաժան ծաղը այդ տեսակ հիւնդ աստուածաբանութեան դէմ, ճորտերի ազատութեան հրովարտակի խմբագրութիւնը Աղէքսանդր Ակադեմիայի յատկապէս այդ մետրոպօլիտին յանձնարուեց և նրա ձեռքով էլ գրուեց 1861 թուի փետրվարի 5-ին:

Կազմն քաղաքի Ա. Փրկչի վանքի վարդապետ հ. Անգլէասը իւր «Եկեղեցու և ծխական կեանքի վերածնութիւն» վերնագրով յօդուածում, որը տպուեց «Պազճենու» թերթում, հրաւէր էր կարդում հոգեառականներին՝ միանալ ինտելիգէնցիայի հետ և միասին ժառայել ժողովրդական գործին: Միսիօներական թերթի մէջ ոմն Գրինեակին ամբողջ ինտելիգէնցեան կոչում է «անհաւատ», իսկ հայր Անդրէասի կոչը կապկային ժամածուութիւններ: Այս պատճառով «արտակարգ եռանդուն» Գրինեակինին հոգեառականութեան և հասկացող դասակարգի միացած գործունէութիւնը թւում է շատ համարձակ և վտանգաւոր մի գործ, որը Եկեղեցու հովիւներին կարող է դարձնել նաբաթ և Աքիուդ, որոնք զոհից սեղանի վրայ օտար կրակ բերին:

Ոմն Աղեքսանդր աբեղան սլատանխանում է Գրինեսկինին
շատ խելացի մի յօդուածով և ասում, որ քանիմաց դասա-
կարգին անհաւատ կոչելը անարդարութիւն է և ճշ ժարտու-
թիւնից հեռու։ Նրան կարելի է հակաեկեղեցական կոչել, ըաց
ոչ անհաւատ։ Որ այդ դասակարգի և եկեղեցու մէջ խորթու-
թիւն կայ, դա անկասկած է, ըաց հէնց այդ խորթութիւնը վե-
րացնելու համար գործել պէտք է սկսի ամենից առաջ ի՞նքը՝
հոգեսրականութիւնը և երբէք չը փախչի միասնին գործելուց։
Առանց հանուելու և ջրի մէջ սուզուելու լողալ չի կարելի սո-
վորել և գործից փախչելով, մենք կը նմանուենք այն մարդուն,
որն ուղենալով լողանալ, նախ վճռեց սովորել լողանալու ար-
հետք և ապա միայն ջաւըը մտնել։

„Պեր. Եթենիկ“ և 42-ր համարում կարդում ենք.

Մեր թեմական կառավարութեան հիւանդու տեղերից մէկն
է գործակալների ներկայ գրութիւնը։ Գործակալների կազմի բա-
րեփոխութեան խնդրին է նուիրուած Ապրատովի թեմակալին
թեմի հոգեսրականներից մատուցած գրութիւնը։ Հոգեսրական-
ներն այդ գրութեամբ պահանջում են, որ գործակալներն ընտրուին
գործակալութեան հոգեսրականների կողմից և հաստատուին թե-
մակալներից։ բացի գորանից պահանջում է գործակալական խոր-
հուրդների կը աւասութեան շրջանի ընդարձակումն։ Գործակա-
լութիւններն իրենց ներկայ ձևով՝ մեռցնող, կազմալուծող մի ոյժ
են։ Էլ չենք խօսում նրանց «ձևապաշտութեան և չինովնիկա-
կան» ձևերի մասին, որ իրօք ըիւրօկը ատիկական պրինցիպների սոս-
կալի միացումն է եկեղեցու դուռ «հայրական» յարաբերութեան
հետ, և ծառայում է սրբիս աղքիւր անսահման կամայականու-
թեան, «որը հոգեսրականութեան մէջ կը թում է ըոլովին յայտնի
յատկութիւններ՝ ստորագրութիւն, կեղծաւորութիւն, անձին
և ոչ թէ գործին ծառայելը և այլն»։ Քահանաներն իրենց գրու-
թեան մէջ յայտնում են, որ գործակալների ներկայ կազմի ժա-
մանուկ իրենք անկարող են պահպանել իրենց մարդկային ար-
ժանապատութիւնը առանց գործակալների հետ տրագիքական
ընդհարումներ ունենալու։ Թուելով, թէ ինչ բաժան կացու-
թիւն է ստեղծում և յատկութիւններ պատուաստում ըիւ-
րօկրատ—չինովնիկ գործակալութիւնը, քահանայը ատում են,
որ ընտրական սկզբունքի գործադրութիւնը կը ոչնչացնէր այն
բիւրօկրատիկական միջնապատը, որը ներկայում գոյութիւն ունի
եակիսկոպոսի և ծխատէր քահանաների մէջ։ Այդպիսով նա օդ-

տակար կլինէր ոչ միայն հոգեսորականների, այլ և եպիսկոպո-
սական իշխանութեան համար: Ընտրուած դործականների չնոր-
հիւ եպիսկոպոսն աւելի սերտ կը կապուէր հոգեսորականութեան
հետ, կը ճանաչէր նրա կարիքները, մոքերն ու տրամադրու-
թիւնները և կազզէր նրանց վրայ իւր բարոյական հեղինակու-
թեամբ: Տարաբաղդաբար այդ դրութեան մէջ ըերած «պա-
տասխանը» ցայց է տալիս, որ հոգեսորականների մէջ դեռ հառ-
տատում պահպանում է այն յետադիմական աեսութիւնը, որը
մարդկանց բաժանում է երկու անհաւասար՝ իրարից անջրազե-
տով զատուած դասակարգերի, մի կողմից ինչ որ փոքրահասակ
յանցաւո՞ների դադութն է, որը ոչ միայն չի կարող լաւը վա-
տից և չարը բարուց ջոկել, այլ և ոչ մի բանի մասին չի կա-
րող մտածել՝ բացի յանցանք դործելու յարմարութիւններից,
իսկ միւս կողմից՝ փոքրամիթիւ ընտրեալներ, անմեղ՝ թէ մտքով և
թէ դործով: Արբ կառավարութիւնը կարեսը դատեց «վատա-
հութիւն» յայտարարել քաղաքացիներին, եպիսկոպոսի և հոգե-
սորականութեան յարաբերութեան հին տեսակէտն անմիտ բան
է հանդիսանում: Այս պատճառով աւելի զարմանալի է, որ
Սարատավի հոգեսորականութեան գրութիւնը ոչ թէ համակըսու-
թիւն չը դատ, այլ և համաժողովին չը զեկուցուեց:

— Միանգամայն ընական եցեղյթ, որովհետեւ Գերմոգէն-
ները ոչ մի բանից այնքան չեն վախենում, որքան ընտրական
սկզբունքից և այդ շատ հասկանալի է, որովհետեւ այդ սկզբ-
ութեանը ինելացի դործագրութեան միջոցին տգիտութիւնն ու
սիմոնականութիւնը չէին կարող իշխել և դործի գլխին կանգ-
նած մնալ:

«ԶԵԽԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽՈՐՅՈՒՐԴԻ»:

Որովհետեւ չեխ ժողովուրդը բաժանուած է բաղմաթիւ-
մանը կուսակցութիւնների, որոնք ահագին եռանդ են վատ-
նում մասնակի նպատակնեցին հաօնելու համար, այդ պատճա-
ռով Պրագա քաղաքում միտք է յղացել հիմնել կեդրոնական
մի մարմին, որ ղեկավարի չեխական ժողովը դական ընդհանուր
կեանքը առանց կուսակցական խորութեան և մասնակի շա-
հերի: Այդ նպատակին ծառայում է նոր կազմած «ԶԵԽԱԿԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽՈՐՅՈՒՐԴ», որի գործունէութեան ծրագիրն է
հետեւալը. —

1) Զեռք ըերել և պաշտպանել պետական իրաւոննքը Զե-